

քաղաքն Երկրագործութեան և ճարտարապետութեան դպրոց մը: Կան ՚ի Եսալ Երեք աթոռք ուսմանց, օրէնսդիտութեան, բնակն զիտութեանց, և գլուխութեան ու իմաստասիրութեան:

Այս մանաշյուրին. — Բարիզու 1865 ամին օգոստոսի 19ին ժողովը կարգաւորեց որու կերպով երկուց իշխանութեանց կառավագործինք՝ առաջարկելով ապագայ միութիւն: Այս միութեան դրոքը կատարուեցան միակ իշխանի մը ընտրութիւնէն ետքը, Ալեքսանդր Յովհաննէս (գնդապետն Քուզա): Պուրքէ մայրաքաղաք ընտրուեցաւ, Հանդերձ միով կառավարութեամբ, միով պաշտօնարանիւ, և միով օրէնսդիր ժողովող: Նոյն օրէն սկսեալ միացեալ իշխանութիւնքն կազմեցան ՚ի մի տէրութիւն անբաժանելի Ծումէլի անուանիք: Տասը տարի անցնելէն ետքը Քուզա իշխանն հրաշարեցաւ և ազգային քուէարկութեամբ իշխանական թագն կարուսի Ալեքսանդր տրուեցաւ, որ Կիչիսէ այժմ, և է ՚ի տանէ Հոկենձուլլերնի:

Իշխանին սահմանադրական իրաւունքներն ժառանգական են ուղիղ և օրինաւոր յաջորդութեամբ արական սեռի մէջ: Որ

եթէ պակասելու ըլլայ ուղիղ գծով, գահն եղարաց մեծագունին կը ընկնայ և իր որդւոց: Խիսանին անձ անբռնաբարելի է: պաշտօնեայք պատասխանատու են Խիսանն կ'անուանէ և յետ կոչէ իր պաշտօնեաները, ինքն կը սահմանէ և կը հրատարակէ գորէնս, և կ'անուանէ ու կը հաստատէ ամեն հասարակաց պաշտօնեաները:

Ինքն է բանակին գլուխը, դրամոյ կնիքն, և սատր աէրութեաց հետ գանձագրողն: Իրաւունք ունի ժողովելու արտաքոյ կարգի Ազգային ժողովը, և լուծանելու զանոնք ուրոյն ուրոյն կամ միանգամայն:

Տէրութեան իշխանութիւնները. — Տէրութեան բոլոր իշխանութիւնն ազգէն կը բըղի: Օրինադիր իշխանութիւնն Ազգային ներկայացուցման և իշխանին պահեալ է: Ազգային ներկայացուցման ժողովն երկուքի կը բաժնուի. Ծերակոյտ և Երեսպորանաց սենեակ: Ամենայն օրէնք կը պահանջեն երկուց օրէնսդիր ժողովոց հաւանութիւնն և իշխանին վաւերացաւմը:

Այս է ահա համառօտիւ Դանուբի ափանց երկրին վիճակը, որոյ քաղաքական ինքնիշխանութիւնն երաշխաւորեալ է ՚ի Գալանգրաց 1865 ամին:

ԵՓՐՍ.Ս ՈՒ ՏԻԳ.ՐԻՍ Ս.ՇԽ Ա.ՐՀԱ.Գ.ՐՍ.Կ.Ս.Ն ՈՒ ՏՆՏԵՍՍ.Կ.Ս.Ն

Պ. Էշբախ (Eschbach) ճանապարհուրդն անցեալ տարւոյն մայիս 23 թուականաւ հետաքրքրական նամակ մը կ'ուղղէ ՚ի Կ-Պօլոյ՝ էքտօնօմիսոդ ֆրանսէ ամսոն լրագրին, ու կը հրատարակուի յունիսի 6ին, որուն մէջ Տիգրիս ու Եփրատ գետոց նաւարկութեան ու տեղայութեան վրայ աշխարհագրական ու տնտեսական ընտիր տեղեկութիւններ գտնալով՝ կը քաղնք այս յետագայ յօդուածովս, որ կը նայ ախորժելի անցնիլ, իբր զի Եփրատ ու Տիգրիս մեր հայրենեաց սահմաններն են:

« Բննենք Տիգրիսի նաւարկութիւնը Տիգրակէքիլէն մինչև ՚ի Մուսուլ և ՚ի Պաղտատ: Թէպէտ և զետն այնչափ

յորդաջուր չէ ՚ի Տիգրակէքիր, սակայն կը ձգուին քէկէքներ, որոնք կ'իջնան մինչեւ ՚ի Պաղտատ: Այս նորածեն նաւարկութիւնն ստվորական է հիմա բուլը այս կողմերը: Երբոր բարձր է գետոյն ջուրը, քէկէք մ'երեսուն ժամուան մէջ կը նայ իշխան Մուսուլէն ՚ի Պաղտատ:

« Փորձեցին տեղափոխութեան այս վաղեմի ոճոյն տեղ կանոնաւոր նաւարկութիւն մը հաստատել: Շողեմուղ նաւ մը գէպէ ՚ի վեր ելաւ ՚ի Տիգրիս Պաղտատէն մինչև այս ինչ հեռաւորութեամբ Մուսուլի, և կը ցաւ հասնիլ մինչև ծանօթ կէտ մը դրունք Ներքովրայ կոչուած: Ազարական զրոյցն տալրեկ աւանդութիւն ունի այս անձին վրայ քան ինչ որ է սրբազն ա-

ւանդութիւնն : Արաբացին ոչ թէ նշա-
նաւոր որսորդ մը կը համարի զնե-
բրովի՛ Յակիտենականին առջև, այլ
երեւի շինող մ'էր, կ'ըսէ, որ և առաջ-
նորդ եղաւ Բարելնի աշտարակին շի-
նութեան . իրեն կ'ընծայէնաւ կամըրջի
մը շինութիւնը Տիգրիսի վրայ : Ինչ որ
աւ ըլլայ զրոյցն, այս ինչ ստոյգ է, որ
երբեմն կամուրջ մը կար այն տեղը որ
հիմա Ներբովի՛ անուամբ կը կո-
չուի, որուն աւերակներն գեռ մինչև
ցայսօր կը տեսնուին : Տիգրիսի նաւար-
կութեան ընդ մէջ Մուսուլի և Պաղ-
տատայ ամենածանր վտանգն հօն է :
Խութից նման բարձր ժայռեր տնկուած
են հօն գետոյն մէջ, ուր սահանք մը
կը ձևացնէ ջուրն : Այսպէս փորձոյ հա-
մար գործածուած նաւն կտրեց զՏի-
գրիս մինչև այս կէտը, թէպէտ և ու-
նեցաւ ինչ ինչ արգելքներ . և կրցաւ ա-
պա իջնալնորէն դիւրութեամբ 'ի Պաղ-
տատ : Այս փորձով ստուգուեցաւ թէ
կարելի է Տիգրիսի նաւարկութիւնն ընդ
մէջ Պաղտատայ ու Դրանց Ներբովի՛ այ-
Մեծապէս շահաւոր կ'ըլլար այս աշխար-
հաց եթէ կատարուէին այն հարկաւոր
շինութիւնքն՝ որ կը պահանջուին կանո-
նաւոր ճամբայ մը բանալու համար մին-
չև 'ի Մուսուլ : Կան այս կողմերը ար-
գաւանդ երկիրներ, բայց զուրկ են
յարաբերութեան միջոցներէ :

« Տիգրիս տարւոյն ամեն եղանակին
նաւարկելի է Պաղտատէն մինչև 'ի
խուռնա, ուր Եփրատայ հետ կը միա-
նայ Շաթ-Էլ-Արաբ գետ, և մինչև հօն
կրնան հասնիլ մեծամեծ նաւաք ամեն
եղանակին : Սակայն պէտք է փոքրիկ
բացառութիւն մ'ընել յամառան : Սաս-
տիկ վերմութեան պատճառաւ շուրն
ցածնալով՝ գետոյն անկողնոյն վրայ
շարժական աւազոյ կյատեր կը ձևա-
նան, որնոք կը գժուարացնեն նաւար-
կութիւնը՝ սակայն առանց ընդհատե-
լու զայն : Զերմ եղանակին և այս ար-
գելից ձևացման ատեն գրեթէ երկու
ամսուան միջոց Պաղտատէն 'ի Պատրա
եղած ճամբան եօֆն՝ ութ կամ տասը
օր կը տեէ, իսկ տարւոյն միւս եղանա-

կաց մէջ երեք կամ չորս ժամ միայն,
և ընդհանրապէս Տիգրիսի ընթացքն
շատ մեղմ է Պաղտատէն մինչև խուռ-
նայէտ այս ինչ հեռաւորութիւն, և իր
ընթացից այս մասին վրայ ափունքն
բարձր է և անզգալապէս զար 'ի վայր:
Որչափ որ կը մօտենանք խուռնայի,
այս ինքն Եփրատայ հետ միացման
կէտին վրայ, Տիգրիսի խոսորմուն-
քներն կը բազմանան, ափունքն կը
ցածնայ և ընթացքն ալ կ'երազի : Ան-
ձեւային եղանակաց մէջ կ'ուսի Տի-
գրիս, արտաքս կը զեղանի իր տաշ-
տէն, և կ'ողողէ բոլոր շրջակայ դաշտե-
րը գրեթէ ամիս մը, Ներպահ հաւա-
սար պտղաբերելով գերկիրն, թէ ոչ և
աւելի : Առաւելապէս խուռնայի մօտե-
րը ուր գետոյն ափանց քիչ բարձրու-
թիւնն կը դիւրացնէ ջրոց զեղանին,
կը վերածնանի նորոգ կենդանու-
թեամբ, գետինն կը ծածկուի բազմա-
տեսակ տունկերով, և ամեն կողմանէ
հօն կը վազեն արօտականք հանդերձ
իրենց հօտիւը : կը սերմանեն ու կը ժո-
ղովն մէկէն, և երբ կը հասնի ցամա-
քութիւն՝ կը գաղթին :

« Տիգրիս և Շաթ-Էլ-Արաբ, կ'ըն-
ծայեն բոլոր իրենց ընթացից վրայ Պաղ-
տատէն մինչև 'ի Պատրա, հիանալի նկա-
րատես երկոյթ մը, Մերթ տեսութիւնն
կը տարածուի արմաւենեաց ընդար-
ձակ անտառաց վրայ, և մերթ կը տես-
նուին մացառուուք՝ յորս կը թաքչին
վայրենի գազանք, առիւծք, վայրենի
կատուք, և շնագայից անթիւ բազմու-
թիւն : Վարազն շատ սովորական է,
և կը թափառի անհամար բազմու-
թեամբ, մանաւանդ երբ ափունքն կա-
նաչազարդք են : Վայրի սագ, հաւա-
լուսն, քաջահաւ, մեծ բազմութիւն
մ'ազգի ազգի թռչնոց, զանազանագոյն
փետրովք, կը զեղանին երկու ափանց
ու հիանալի կղզեաց վրայ, որք կը բար-
ձրանան գետոյն ընթացից մէջ :

« Եփրատ ու Տիգրիս կը կանոնաւո-
րեն իրենց ընթացքն որչափ որ կը
մօտենան խուռնա քաղաքին՝ որ շի-
նուած է երկուց գետոց խաւոնըմանց

վրայ : Այս կենդրոն միջավայր քաղաքն որ գրեթէ 6000 բնակիչ ունի, կը դժու նուի մեծազանգուած ջրոց ընթացից վրայ . և ասիկա կը մեկնէ այն զարմանալի յատկութիւնն որ առողջարար կիմաց ունենալով հանդերձ ջերմի ենթակայ է : Այս քաղաքիս մերձաւոր ըլլալն այնպիսի երկիրներու որ կրնան ու ոռոգուիլ ջրանցքով, և ներկայ վիճակիս մէջ անդամ մեծամեծ նաւաց Շաթթէլ-Արարէն մինչև 'ի խոռնա ելերու կարելիութիւնն զուշակել կու տան թէ ապագայ մթերանոց մ'ըլլայ անցուգարձի վաճառականութեան :

« Խոռնային դէպ 'ի Պատրա իջնալով կը համնինք 'ի խորդ-ի-Ֆրէնքի (Գղեակ Փուանկաց) . այսպէս կը կոչուէր այն տունն զոր շինել տուեր էր հօն Անդրիոյ փուս-հիւպատ մը , որոյ օդն թէպէտ խոռնայի օդոյն չափ առողջարար չէ , սակայն նուազ մահառիթ է քան զՊատրայի օդը : կը գտնուին 'ի խորդ-ի-Ֆրէնքի ածխոյ մթերներ : Անկէց գրեթէ ժամուան մը մէջ կը հասնինք յԱշար , որ Պատրային վաճառատեղին է Շաթթէլ-Արարի վրայ :

« Պատրա քաղաքն անմիջապէս գետափը չէ , ինչպէս կը կարծուի ընդհանրապէս ։ Ենինուած է ջրանցքի մ'երկայնութեան վրայ որ կը մեկնի Աշարէն և կ'ուղղի դէպ արևմուտք : Հիմա շատ ընկած է իր առաջին պայծառութենէն . քնակին հազիւ 16 հազար է : ի բաց թողով զիսաւոր ջրանցքներն որ 'ի հիւսիսային և 'ի հարաւակալմն Պատրայի , ոռոգման ջրանցքներն կը լիցուին ջրոց մակընթացութեան ատեն . որ կ'ընէ իր ազգեցութիւնը Շաթթէլ-Արարի , Եփրատայ , Տիգրիսի և Խոռնայի վերին կողմերը : Տեղատութիւնն բոլորովին ցամաք կը թողու այս ջրանցքները :

Այս գետոց ափունքն ծածկուած են արմաւենեաց անտառներով ու հոտաւէտ ծառերով . անանկ որ տեղացիք չեն բաւեր ժողովելու զարմաւան , և ապրոյն նոյն եղանակին դորձաւորաց մեծ բազմութիւն մը կու գոյ մեր-

ակայ կողմերէն : Ջրանցից ջուրը ու ըրպիետն ըմպելի չէ , անոր համար ստիպուած են 'ի Պատրա ' Աշարէն բերել տալու ջուր : Այսպէս այս քաղաքը ոչ միայն Եփրատայ հիւսիսակողմը ձևացած մեծատարած ճահճաց ուղղակի ազգեցութեան տակ է , այլ և տենդն աւելի ևս տարածուած է հօս վատառողջ ջրոց պատճառաւ զոր կը իմեն , և ջրանցից տղմին արտահոսման , որ տեղատութեամբ կը հազորդի . մմանորութիւնն է կը հասկցուի ասկէց , որ Պատրա անշարմար ըլլալուն բնակութեան , ոտնաւոտն դէպ 'ի անկումն իւր զիմած է :


« Ելլար հաստատուած է քառասնորեայ արգելարանն , նաւարանն , անկելանոցն և մաքսատունն : Աշարէն դէպ 'ի Պատրայից ծոցն իջնալով , կը տեսնուի պարսկական ափունքն քանի մը մըրն հեռաւորութեամբ : Ասկէց սկըսեալ մինչև 'ի գետաբերանն Շաթթէլ-Արարի , աջակողմեան ափունքն տաճկական է , և ձախակողմեանն պարսկական : Այս երկրորդ ցամաքին վրայ կը տեսնուի Մոհամարա քաղաքին տեղը : Դեռ աւելի վար իջնալով կը տեսնանք երկու ափանց վրայ ալ բազմաթիւ գեղեր : Բնակիչքն կիսով չափ 'ի Վայրենութեան են տակաւին :

« Շաթթէլ-Արար Պատրայից ծոցը կը թափի բազում բերնով . որոց մէկը միայն նաւարկելի է և կոչուի 'ի բնակչաց ֆայ : Տաճկական հողոյն վերջին կէտին վրայ կայ ուրիշ տեղ մ'ալ որ նոյն անտուամբ կը կոչուի , որ ոչ քաղաք է և ոչ գիւղ , այլ բազում շինից ժողով մը տէրութեան զանազան պիտոյիցը համար : Կայ 'ի ֆայ մաքսատուն մը , քառասնորեայ արգելարան և երկու պաշտօնատունք հեռագրոյ . մին տէրութեան և միւսն անդիվական ընկերութեան գիտենք որ թուրքիոյ միջնադգամին հեռագրական թելը կը ձգուի մինչև 'ի ֆայ , ուր նորէն կը կապուի 'ի Քուրաչի անդիվական Հնդկաստանի արևմտեան ափան վրայ պարանով մը , որ իր ընթացից վրայ ցամաք կ'ելլայ 'ի Պատրակաստան և յԱպուքիր : Երկրին


կառավարն է քայլ
մաքամը, տեսակ
մը կուսակալ, որ
ունի ձեռացը տակ
հաստատուն բա-
նակ մը քանի մը
հրանօմթօք և գունդ
մի զօրաց : Այս
պաշտպանողական
հանդերձանքն այն
չափ աւելի կարե-
ւորք են, որչափ զի
մոտերը նասսարի
մեծ ցեղը կայ ,
համբաւաւոր իր ա-
ւարառու բարուքը :

«Մակընթացու-
թիւնն ու տեղա-
տութիւնն կ'օգ-
նեն նաւաց մոնա-
լուն ՚ի Շախ-էլլա-
րաբ և ելլալու ան-
կէց : Տասուերկու
մղոն միջոց ֆայէն
դէպ՝ ՚ի ծովնաւար-
կութիւնն ամեններն
անվտանգ է : Բայց
այս տասուերկու
մղոն միջոցին վրայ
նաւագետք պար-
տաւորեալեն զգու-
շութիւն ընելու :
Վտանգին պատ-
ճառն այն է որ
ֆայէնի անկողինն
տղմուտ է բոլոր իր
երկայնութեալին .
և նաւաց անցից
համար ուրիշ մի-
ջոց չի մնար՝ բայց
եթէ սեսակ մը փո-
քրիկ առուակ , որ
չորս զրկաչափէ ա-

ւելի խորութիւն չունի : Թէ որ նաւն խո-
տորի յաջ կամ յահեակ , կը խրի : Այս
առուակն նշանակուած է նշաններով
զորս զնել առուաւ անզդիական ընկերու-
թիւնն . բայց իրարմէ շատ հեռու զը-
րուած են , որով նաւուղաց պարձն կը



Վ. Ա. Բ.



Վ. Ա. Բ.

դժուարանայ : Պարսկային ծոցէն եկող
նաւերն իրենց նաւուղիզը Ապուքիրէն
կ'առնուն Պարսից ափանց վրայ , որ ի-
րենց համար ժամանակի մեծ կորուստ
է . խակ գուրս ելլող նաւերն կ'առնուն
ֆայէն : A.R.A.R. @